



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԸ Հ.Ա.Գ.-Ի ՄԷՋ



Լիբանանի մօտ Հայաստանի Հանրապետության նոր նշանակուած դեսպան Տիար Աշոտ Քոչարեան Հ.Ա.Գ. այցելեց 17 Դեկտեմբերի, 2009-ին եւ դպրոցի Երկրորդական բաժնի ատենամարզանքի հիւրը եղաւ: Պրն. Տնօրէնին բացման խօսքէն ետք, Պրն. Ա. Իրնէշլեան հարցազրոյցը վարեց, Պրն. դեսպանին պատասխանները աշակերտութեան կողմէ հետաքրքրութեամբ ընկալուեցան:

## ՇՐՋԱՆԱԲՐՏԻՑԻՑԻ ՅԱԶՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵԿՈՆ

Շաբաթ, 28 Նոյեմբերի երեկոյ, ժամը 8.00-էն սկսեալ, Հայ Աւետ. Ա. Եկեղեցիի հանդիսարանին մէջ, Հ.Ա.Գ.-ի Պէյրուսի Շրջանաւարտից Միութեան վարչութեան կազմակերպած «Հայկական Երեկոյ»ին, բազմաթիւ անձեր, որոնց մէջ շրջանա-



ւարտներ, ներկայ եղան: Ատենապետուհի Օր. Հուրի Թեստենեանի բարի գալուստի խօսքէն ետք, Վեր. Յ. Սարգիսեան աղօթք մատուցանեց եւ ընթրիքը սկսաւ: Գործադրուեցաւ գեղարուեստական յայտագիր մը, որու մէջ՝ Հ.Ա.Գ.-ի ժողովրդային պարերու խումբին հայկական պարն ու լիբանանեան տեսքէն: Վիճակահանութենէն առաջ վարչութեան հրաւերով դպրոցի տնօրէն Դոկտ. 2. Սըրր-

## Հ.Ա.Գ.-Ի ԵՐԵՔ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ ԱՆԴԱՄ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ



Երկրորդ շաբթ՝  
Ն. Մխսեան եւ Ա. Պազալեան



Կերոնը՝  
Հուրի Լեփեճեան

2008-2009 կրթական տարեշրջանի վերջերուն, ոչ-կառավարական կազմակերպութեան մը՝ Արտագաղթի Միջազգային Կազմակերպութեան եւ ՄԱԿ-ի Ժողովրդավարութեան Ամրապնդման Հիմնադրամի ներկայացուցիչը դպրոց ներկայացաւ, յայտնելու, թէ՛ Լիբանանի Կրթական Նախարարութեան կողմէ Հ.Ա.Գ.ը ընտրուած էր մասնակցելու մրցանքի մը: Մրցանքը շարադրական էր: 10-րդ եւ 11-րդ դասարանի աշակերտներ պիտի մասնակցէին, նիւթ ունենալով՝ «Եթէ Պետական Երեսփոխանական Թեկնածու Ըլլամ, Ինչ Պիտի Ըլլայ Ընտրական Ծրագիրս»: Երկու դասարաններէն որոշ թիւով աշակերտներ մասնակցեցան: Ամիս մը ետք կազմակերպութիւնը յայտարարեց, թէ՛ 580 աշակերտներ Լիբանանի այլազան դպրոցներէն մասնակցած էին, եւ մասնակիցներէն 64-ը անդամ ընտրուած էին «Երիտասարդական Առաջին Խորհրդարանին» (Փարլըման Շեպայ), որոնց երեքը եւ միակ հայերը Հայ Աւետ. Գոլէճէն էին, Հուրի Լեփեճեան (ԺԱ.), Արմէն Պազալեան (ԺԱ.) եւ Նժդէհ Մխսեան (Ժ.): Անոնք իրենց առաջին նիստը գումարեցին Իւնեսքոյի մէջ, 23 Յունիսի, 2009, կ.ա. 10.30-ին: Նիստին ի միջի այլոց ելոյթ ունեցաւ Լիբանանի Կրթական Նախարար Պահիյա Հարիրի, որ ըսաւ, թէ՛ սոյն երիտասարդական խորհրդարանը պիտի գործէ Լիբանանի տարբեր խորհրդարանին հետ գուզահետ: Արդէն քանի մը նիստեր ունեցաւ սոյն երիտասարդական խորհրդարանը:

լեան իր սրտի խօսքը ուղղեց: Ներկաներ հայերէն երգերու Karaoke-ի մը մասնակցեցան, նախ սեղան առ սեղան ապա խմբովին: Խանդավառ մթնոլորտ մը տիրեց եւ ներկաներ կէս գիշերին գոհ սրտով բաժնուեցան սրահէն: Հասոյթը տրամադրուեցաւ դրպրոցի կրթանպաստի ֆոնտին:

# Հ.Ա.Գ.-Ի ՊԱՐԱԽՈՒՄԲԸ ՊԱՐԵՑ ՉՈԳԱԳ ԷԼ ՊԼԱԹԻ ՓԱՌԱՏՕՆԻՆ

Շաբաթ, 10 Հոկտեմբերի, 2009, երեկոյեան ժամը 6.00-ին, Հ.Ա.Գ.-ի ժողովը-րդային պարերու պարախումբը Պէյրուքի Հարիրի թիւ 2 դպրոցին մէջ մասնակցեցաւ Չոգագ Էլ Պլաթի փառատօնին, պարելով երկու պարեր՝ հայկական եւ լիբանանեան: Պարուսոյցն էր Օրդ. Հուրի Գալայճեան: Խումբի անդամներն էին՝ Հուրի Լեփեճեան, Ալին Արթինեան, Չաւեն Լեփեճեան, Էփի եւ Տիգի Քիրքճեան, Ռիթա Լեփեճեան, Էնճի Քիրեճեան եւ Փաթիլ Սարգիսեան: Խումբը արժանացաւ մերկաներու գնահատանքին:



անդամներն էին՝ Հուրի Լեփեճեան, Ալին Արթինեան, Չաւեն Լեփեճեան, Էփի եւ Տիգի Քիրքճեան, Ռիթա Լեփեճեան, Էնճի Քիրեճեան եւ Փաթիլ Սարգիսեան: Խումբը արժանացաւ մերկաներու գնահատանքին:

## ԱՇԿԵՐՏԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

•25 Հոկտեմբերին, Սբ. Գիրքի Ակումբը հովիւին եւ հոգեւոր տեսուչին գլխավորութեամբ, այցելեց Միգիարայի շրջանը, ուր Յիսուսի կեանքը պատկերացնող արձաններ կան: Պաշտամունքը առաջնորդեց Սթիւ Ագատեան, իսկ Վեր.



Յ. Սարգիսեան խորհրդածութիւններ ըրաւ:

•3 Նոյեմբերին, Ժ. եւ ԺԱ. դասարանները Տէր Մելգոնեան սրահին մէջ ներկայ եղան «Այգ» երիտասարդական երգչախումբի ելոյթին:

•6 Նոյեմբերին, Նախ. Ա-Գ. դասարանները Անթիլիասի Կաթողիկոսարանի Հայ Գիրքի ցուցահանդես-վաճառքին այցելեցին:

•14 Նոյեմբերին, Պատմութեան Ակումբը դպրոցին մէջ դիտեց «Նիգոլաս Էնտ Ալեքսանտրա» ֆիլմը, Ռուսիոյ վերջին ձար Նիգոլաս Բ.ի եւ իր թագուհիին ու ռուսական յեղափոխութեան մասին: Ապա աշակերտները ճաշ ունեցան Պլիս փողոցի դրակից երկու ճաշարաններու մէջ:

•20 Նոյեմբերին, Է.-ԺԲ. դասարանի աշակերտները, առաջնորդութեամբ Պրն. Տնօրէնին եւ իրենց դաստիարակներուն, այցելեցին Մուավատ թանգարանը՝ Չոգագ Էլ Պլաթի մէջ:

•3 Դեկտեմբերին, ԺԱ. եւ ԺԲ. դասարանները Շամլեան-Թաթիկեան վարժարանին մէջ ներկայ եղան Դոկտ. Արի Թօփուզիանեանի «Գիտութիւն եւ Հաւատք» դասախօսութեան:

## ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ Հ.Ա.Գ.-ԷՆ



զանքի պահերը սկսան Ռիոս, 6 Նոյեմբերին, 10 Հոկտեմբերին, Թարգմանչաց Տօնի նշումով: Պատգամաբերն էր Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միաբան Հոգ. Տ. Թորգոմ Արք. Տօնոյեան: Գործադրուեցաւ գեղարուեստական յայտագիր:

Ռիոս, 6 Նոյեմբերին, դպրոցի Երկր. Բաժնի ա տ ե ն ա մ ա ր գ ա ն ք ի հիւրն էր:

- 2008-2009 կրթական տարեշրջանի աւարտին, 12-րդ դասարանի 3 աշակերտներէն 2-ը՝ Հրաչ Բեստէնեան եւ Ասատուր Խանճեան, պետական պագալորիայի քննութիւններուն եւ 9-րդ դասարանի 7 աշակերտներէն 6-ը՝ Րաֆֆի Բեստէնեան (լաւ յիշատակութեամբ) Վիգէն Իգլատտեան (լաւ յիշատակութեամբ), Կարին Հայտօսթեան, Նայիրի Գրիգորեան, Գրիգոր Եմէնճեան եւ Չաւեն Լեփեճեան պետական պրեզիդենտական քննութիւններուն յաջողեցան:

- Հ.Ա.Գ.-ի Միջնակարգի արաբերէնի մնայուն ուսուցչուհի Օրդ. Մարիա Մուավատ, 20 Սեպտեմբերի, 2009-ին, Տիւրքիոյ Շուր Շուր Սէյտե եկեղեցիին մէջ պսակուեցաւ Տիար Հայսամ Ռահպանիի հետ:

- Հ.Ա.Գ. վերաբացաւ իր դռները Հինգշաբթի, 1 Հոկտեմբերի, 2009-ին: Դպրոցը աշակերտութեան թիւը յաւելում կրեց բաղադատմամբ նախորդ տարուան: Այս տարի ունեցանք 24 նորեկներ: Աշակերտութեան ընդհանուր թիւը 120 է:

- Հ.Ա.Գ.-ի Տիկնանց Օժանդակ Մարմինը Ամանորի պրանչ-պագար մը ունեցաւ Տըպպայի Մարինա Գլապին մէջ, 11 Դեկտեմբերի, 2009-ին, կ.ա. ժամը 10.30-Էն սկսեալ:

- Մեքսիքոյի Լիբանանի մօտ դեսպանատան մշակութային կցորդ Անթոնիօ Լոփեզ-

- Դպրոցի զոյգ բաժիններու ատենամար-

# ԼՈՒՐԵՐ ՇՐՋԱՆԱԴԱՐՏՆԵՐԷ

- 1945-ի շրջանաւարտ Տիար Սամուէլ Իլանճեան Լիբանանի եւ Ա.Մ. Նահանգներու մէջ իր երկարամեայ ազգային թատերական, մշակութային եւ հասարակական լայնածիր գործունեութեան համար, Ամե-



նայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ. Վեհափառ Հայրապետին կողմէ շնորհուած Ար. Սահակ-Ար. Մետրոպ շքանշանով պատուրդեցաւ, ձեռամբ Ամերիկայի Արեւմտեան Թեմի Առաջնորդ Տ. Յովնան Արք. Տերտրեանի, մեծարանքի ձեռնարկի մը ատեն, որ տեղի ունեցաւ 27 Յունիսի, 2009-ին, Փասատեանայի Ալեք Մանուկեան Մշակութային Համալիրին մէջ: Միաժամանակ ան ստացաւ Հ.Բ.Ը.Մ.-ի նախագահական շքանշանը, ձեռամբ Հ.Բ.Ը.Մ.-ի Կեդր. Վարչութեան անդամ, Հ.Ա.Գ.-ի նախկին աշակերտ Տիար Սիւսան Սիւսանեանի: Պր. Իլանճեանի տիկինն ալ մեծարուեցաւ:

- 1971-ի շրջանաւարտ Դոկտ. Արա Թէքեան նշանակուած է Ընկերակից Տեսուչ (Associate Dean) Շիքակոյի Միջազգային Գործերու Բժշկական Համալսարանէն ներս:

- 1990-ի շրջանաւարտուի Տիկ. Արաքս Պալեան-Գրիգորեան, 17 Մայիսի, 2009-ին, Բէյս Ուեսթըրն Համալսարանէն Դոկտորա (Ph. D.) ստացած է հիւանդապահութեան ճիւղին մէջ:

- 1971-ի շրջանաւարտ Տիար Յարութիւն Տեր Դաւիթեան, Կլենտէյլի մէջ, ազգային երեք կուսակցութիւններու կողմէ կազմակերպուած Հայաստան-Թուրքիա արձանագրութիւններուն առ ի բողոք եղած միջինկին, Ա.Դ.Հ.Կ.-ի կողմէ խօսք առած է 10.000 հոգիներու ներկայութեան:

- 1955-ի շրջանաւարտ Տիար Զօհրապ Թագեան, Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբի իբրեւ պատուոյ նախագահ խօսք առած է Ծերակուտական Ռապըթ Մենենտերը մեծարող ձեռնարկին:

- Հ.Օ.Մ.-ի Արեւմտեան Ամերիկայի 89-րդ Տարեկան Շրջանային պատգամաւորական ժողովին, որ տեղի ունեցած է Յունիսի, 2009-ին, Կլենտէյլի մէջ, Հ.Օ.Մ.-ի վարչական ղնտրուած է 1980-ի շրջանաւարտուի Օրդ. Ռիթա Հինդլեան: Ապա՝ վարչական առաջին ժողովին ղնտրուած է ատենադպրուի:

- 1966-ի շրջանաւարտուի Տիկ. Սոնիա Չեօրեքճեան-Գրաճեան, 2007-էն ի վեր Տնօրէնուիին է Ար.

Սահակ-Ար. Մետրոպ Ազգ. Վարժարանին, Թորոնթօ (Գանատա):

- Սեպտեմբեր 2009-ի երրորդ շաբաթավերջին, Հ.Ա.Գ.-ի 1971-ի եւ 1972-ի քանի մը շրջանաւարտներ Շիքակոյի մէջ անկաշտօն վերահաւաք մը ունեցան: Ունեցան հաւաքական ճաշկերոյթ Դոկտ. Արա Թէքեանի տան մէջ: 10 գոյգեր ներկայ էին: Անոնցմէ հետեւեալները՝ Տեր եւ Տիկ. Հրաչ եւ Լեզլի Գրիգորեան, Տեր եւ Տիկ. Հայկ եւ Գարոլինա Կիլիսերեան, Տիկ. Յասմիկ Սվաճեան-Եազըճեան, Տեր եւ Տիկ. Սերօ եւ Սիլվա Եօրտէքեան, Օրդ. Արսիւն Գալֆայեան եւ Րաֆֆի



Կեօճէլեան, Տեր եւ Տիկ. Սերգօ եւ Կրէյս Գասարճեան, Տեր եւ Տիկ. Վահէ եւ Սենտի Պալիոգեան, Տեր եւ Տիկ. Սեպուհ եւ Էսմա Գրիգորեան եւ Դոկտ. Արա Թէքեան միատեղ 1000 տոլար նուիրեցին Հ.Ա.Գ.-ին:

- 28 Հոկտեմբերին, Հ.Ա.Գ.-ի 1984-ի շրջանաւարտուի եւ նախկին քարտուղարուի եւ ուսուցչուի Տիկ. Լենա Պաթմանեան-Կիլիսանճեան (Ուոքինկիըմ, Անգլիա) Լիբանան այցել օգտուելով, տեսչարան այցելեց եւ դպրոցի գրադարանին նուիրեց The Times History of the World մեծածաւալ արժէքաւոր գիրքը եւ Պր. Տնօրէնին ալ յանձնեց Հին Եգիպտոսի, Հռոմէական Կայսրութեան եւ պատմութեան մեծ նուաճողներու մասին խտասալիկներու երեք ծրարներ: Բաց աստի, իր այցելութեան առիթով Տիկ. Լենա Կիլիսանճեան նաեւ հարիւր տոլար նուիրեց դպրոցին:

## ԳԵՐԱԶԱՆՑ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ

Հայկազեան Համալսարանէն եկած 15 Յունիսի 2009 թուակիր նամակ մը մեզի կը յայտնէ թէ շրջանաւարտներ Նաթալի Գալայճեան, Շանթալ Արաքսեան, Տիալա Թերգեան, Կարօ Զեօրքիւեան եւ Ալին Բէշիշեան, Համալսարանի տեսչական պատուոյ ցանկին վրայ անցած են 2008-2009-ի Բ. կիսամեային, դասերու մէջ իրենց ձեռք բերած բարձր միջիններուն շնորհիւ:

**Haitgazian University**

July 15<sup>th</sup>, 2009

Dr. Zaven Movsesian, Principal  
American Evangelical College  
Beirut

The Office of the President, Arts and Sciences and Business Administration at Hatzgazian University, is pleased and honored to inform you that five of your former students, attending Hatzgazian University, have been placed on the Honors Honor Lists during the Spring Semester 2008-2009. To be eligible for such honors, a student must have had a minimum average of B+ and show high character profile. The total number of students placed on these lists was 75.

The Students are:

Student's Name	Major	Class	Average
ՆԱԹԱԼԻ ԳԱԼԱՅՅԵԱՆ	BA in	SEMESTER	89.75
ՇԱՆԹԱԼ ԱՐԱՔՍԵԱՆ	BA in	SEMESTER	89.75
ԹԵՐԳՈՒ ԿԱՐՕ	B.S. in	SEMESTER	87.50
ՆԱԿԵՆ ԲԵՇԻՇԵԱՆ	BA in	SEMESTER	86.25
ՏԻԱԼԱ ԹԵՐԳԵԱՆ	BA in	SEMESTER	86.17

We would like to congratulate your institution for its high academic level and wish you all the best in the preparation of future generations that Hatzgazian University will be proud to serve.

Looking forward to a stronger collaboration among our institutions.

Sincerely,

*Natalie Galaydjan*  
Natalie Galaydjan, Ph.D.  
Dean of Arts & Sciences

*Leila Araksoyan*  
Leila Araksoyan, Ph.D.  
Dean of Business Administration & Economics

## ԲԱՆՏԱՒՈՐՈՒԹԻՒՆ

- 1988-ի շրջանաւարտ, Հայ Աւետ. Շամլեան-Թաթիկեան Վարժարանի տնօրէն Պատ. Հրայր Չոլագեան եւ տիկինը՝ Կարինէ, 10 Նոյեմբերի, 2009-ին, բախտաւորաւ ծն մանչ զաւակով մը՝ Նարեկ:

- 1977-ի շրջանաւարտ, դպրոցի հոգաբարձու Տոքթ. Բաֆֆի Էլմաճեան եւ տիկինը՝ Թային, 30 Հոկտեմբերի, 2009-ին, բախտաւորաւ ծն առջին երէցստրով մը՝ Մարիա:

- 1992-ի շրջանաւարտուհի Մատուշակ Սողոմոնեան-Քըրտահի եւ իր ամուսինը՝ բախտաւորաւ ծն դուստրով մը՝ Քրիստինա, 14 Սեպտեմբերի, 2009-ին:

## ՊՄԱԿ

- 1997-ի շրջանաւարտուհի Օրդ.

Մարիա Այնեճեան, 7 Նոյեմբերի, 2009-ին, պսակուեցաւ Տիար Վարուժ Ուրիշեանի հետ, Սբ. Նշան Մայր եկեղեցիին մէջ:

- 2001-ի շրջանաւարտուհի Օրդ. Ռոզի Գեորգեան, 10 Հոկտեմբերի, 2009-ին, պսակուեցաւ Տիար Սեպուհի Գազանճեանի հետ, Սբ. Նշան Մայր եկեղեցիին մէջ:

- 1985-ի շրջանաւարտուհի Օրդ. Լարա Շահինեան, 30 Մայիսի, 2009-ին պսակուեցաւ Տիար Բաֆֆի Տիւսիգեանի հետ, Լոս Անճելոս:

## ՄԱՀ

- Հ.Ա.Գ.-ի 1946-ի շրջանաւարտ, եւ 1967-2005 Հ.Ա.Գ. անձնակազմի նուիրեալ անդամ, երկարամեայ նախկին ուսուցիչ եւ ապա հաւատարիմ քարտուղար Տիար Ման-

սուր Գատի (1926-2009), իր տան աստիճաններէն իյնալով մահացաւ 23 Նոյեմբերի, 2009-ին:



- Հ.Ա.Գ.-ի 1983-ի շրջանաւարտ Տիար Աշոտ Խանամիրեան (1965-2009), որ մօրը հետ ԱՄՆ-էն Պէյրուս եկած էր, յանկարծամահ եղած է 28 Նոյեմբերի, 2009-ին:

- Հ.Ա.Գ.-ի 1972-ի շրջանաւարտ Տիար Հրաչ Խանլեան (1953-2009), Լոս Անճելոսի մէջ յանկարծամահ եղած է 2009 Մայիսին:

- 1957-1959 Հ.Ա.Գ.-ի երաժշտութեան դասատու Տիկ. Սիրվարդ (ծն. Գրգեաշարեան) Սողիկեան (1934-2009) մահացաւ 2009 Օգոստոսին:

## ՆՈՒՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

«Լրատու»-ի նախորդ թիւի հրատարակութենէն ասդին հետեւեալ նուիրատուութիւնները՝ ի նպաստ դպրոցին, շնորհակալութեամբ ստացուած են:

Բաֆֆի Մանուկեան Կրթանպաստի Ֆոնտէն (Լոնտոն) 14.200 տոլար, Հ.Բ.Ը.Մ.-ի «Չաւէն Սըրըլեան Մրցանակ»-ը 2500 տոլար, Տիկ. Արաքսի Պալեան-Գրիգորեանի (Ph. D.) առնելուն առթիւ դպրոցի «Արա Պալեան Կրթական Ֆոնտ»-ին՝ Տոքթ. Արման եւ Արաքս Գրիգորեան 150.000 լ.ն., Տիար Արմէն Պալեան 150.000 լ.ն. եւ Տիկ. Սօսի Պալեան 150.000 լ.ն., Տոքթ. Արա Թիլքեան (ԱՄՆ) 1000 տոլար Կրթանպաստի Ֆոնտին, Տիկ. Ալիս Սալիպեան (ԱՄՆ) առ ի գնահատանք ԼՐԱՏՈՒ-ի, 100 տոլար, նախկին ուսուցչուհի Օրդ. Իրմա Կեօքճեան (Գանատա) տեսչարան այցին առթիւ՝ 100 տոլար, Տիգրան Քասունի (ԱՄՆ) 50 տոլար, Վեր. եւ Տիկ. Ներսէս եւ Սեւան Պալապանեան (ԱՄՆ) 100 տոլար, շրջանաւարտ Տէր եւ Տիկ. Կարպիս Գարամարտեան (ԱՄՆ) տեսչարան այցին առթիւ՝ 1000 տոլար, շրջանաւարտուհի Տիկ. Լենա Կիլիսանճեան (Ուոքինհըմ) տեսչարան այցին առթիւ՝ 100 տոլար, շրջանաւարտ Տիար Սեւակ Գալայճեան (Բարիզ) տեսչարան այցին առթիւ՝ 100 տոլար, շրջանաւարտ Տիար Աբրահամ Սաղոմեան (ԱՄՆ) տեսչարան այցին առթիւ՝ 200 տոլար, Անանուն ազնիւ բարերար (Պէրու) 3000 տոլար, 2008-2009-ի վերջին երեք ամիսներու յատկացումը, Տէր եւ Տիկ. Ծօ Շակլեանէն (Գանատա) առ ի գնահատանք «Սիֆօն»-ին՝ 100 տոլար, Տիար Աբօ Սաղոմեան (ԱՄՆ) տեսչարան այցին առթիւ 200 տոլար, Տիար Կարպիս Նազարեան 250 տոլար:

ԱՄՆ-ի Արեւմտեան Ափի Շրջանաւարտից Միութենէն ստացանք հետեւեալ գումարները՝ Տիար Բաֆֆի Գրաճեան 2000 տոլար, Տոքթ. եւ Տիկ. Նազարեթ Տարաճեան 1000 տոլար, Դոկտ. Ծորճ Այնիլեան 1000 տոլար: «Սիֆօն»-ի առ ի գնահատանք Տիար Պետիլիոս Պետոս 100 տոլար, Տիկ. Անահիտ Մէյմարեան 100 տոլար, Տիար Յակոբ Մարգարեան 100 տոլար, Տիար Ասպետ Գրանեան 50 տոլար, Դոկտ. Ծորճ Այնիլեան 50 տոլար, Տիար Ժաք Ապաճեան 33 տոլար, 85-ամեակի յայտագիրին առ ի գնահատանք Դոկտ. Ծորճ Այնիլեան 50 տոլար ֆոնտերու 2008-ի տոկոս Տիգրան Ապաճեան Ֆոնտ 100 տոլար, Վարժապետեան եւ Պէզճեան Ֆոնտեր 268 տոլար 92 սենթ:

ԱՄՆ-ի Արեւմտեան Ափի Հ.Ա.Գ. Շրջ. Միութեան ճամբով դպրոցին նուիրատուութիւններ ըրին Դոկտ. Ծորճ Այնիլեան 1250 տոլար, 1964-ի դասարանէն Ծորճ Կեպէշեան 100, Տոքթ. Արմէն Կեօնճեան 250, Գեորգ Գալայճեան 300, Լենա Գալայճեան 200, Արմինէ Սաղոմոսեան 100, Չարեհ Մահտերեճեան 100, Մարի-Լուիզ Մենեշեան 270, Նինա Միրանեան 100, Յովհաննէս Միկոյեան 300, Աբրահամ Սաղոմեան 150, Տոքթ. Արա Մանուկեան 250, Մարի Դժանեան 200, Միսաք Պարսումեան 200, Չուարթ Եագուպեան 400 եւ Վարդգէս Թաքթաճեան 100 տոլար, որպէս 16 աշակերտներու օժանդակութիւն:

Խմբագիր՝ Տնօրէն Չաւէն Մ. Սըրըլեան

Խորհրդատուներ՝ Տեարք Ներսէս Պաղտոյեան եւ Յակոբ Տեմիրճեան

Էջարդում՝ քարտուղարուհի Շողեր Աղպաշեան-Ֆայսալ

Y.M. Philibossian Armenian Evangelical College P.O.Box 3672- Beirut, Tel: 01-349816 - Fax 01-751469

E-mail: A\_E\_C@cyberia.net.lb